«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հավելված

«Վանաձորի Հ. Թումանյանի անվան

պետական համալսարան» հիմնադրամի

ռեկտորի 29.12.2017 թ. թիվ 1108 Լ/Կ հրամանի

ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ «ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍԱՆՈՂ» ԵՎ «ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿՈՒՐՍ» ԱՆՎԱՆԱԿԱՐԳԵՐՈՒՄ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ, ԱՆՑԿԱՑՄԱՆ ԵՎ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅԱՆ ԿԱՐԳ

Ընդունված է Համալսարանի գիտական խորհրդի կողմից

Արձանագրություն թիվ 9 28.12.2017թ.

Վանաձոր

2017թ.

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) «լավագույն ուսանող» և «լավագույն կուրս» անվանակարգերում ընտրության կազմակերպման, անցկացման և մրցանակաբաշխության նպատակները, չափանիշները և պայմանները:

2. Համալսարանի «լավագույն ուսանող» և «լավագույն կուրս» ընտրելու համար մրցանակաբաշխությունը կազմակերպվում և անց է կացվում յուրաքանչյուր ուսումնական տարվա արդյունքների հիման վրա, որի նպատակն է խրախուսել Համալսարանի բակալավրիատում և մագիստրատուրայում սովորող ուսանողների կրթական, գիտական, հասարակական ակտիվությունը և նպաստել կարգապահության բարձրացմանը:

II. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ «ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍԱՆՈՂ» ԵՎ «ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿՈՒՐՍ» ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

3. Համալսարանի «լավագույն ուսանող» և «լավագույն կուրս» ընտրելու համար մրցանակաբաշխությունը կազմակերպում և անցկացնում է Համալսարանի «լավագույն ուսանող» և «լավագույն կուրս» մրցանակաբաշխության հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով):

4. Հանձնաժողովի կազմի մեջ են մտնում՝ Համալսարանի պրոռեկտորները, Համալսարանի արհեստակցական կազմակերպության նախագահը, ուսումնամեթոդական վարչության պետը, ֆակուլտետների դեկանները, ֆակուլտետային արհմբյուրոների նախագահները, Համալսարանի գիտական քարտուղարը, ուսանողական խորհրդի նախագահը, ուսանողական գիտական ընկերության նախագահը, մշակույթի կենտրոնի ղեկավարը:

5. Հանձնաժողովի անդամներն իրենց գործունեությունն իրականացնում են հասարակական հիմունքներով:

6. Հանձնաժողովը համանախագահում են Համալսարանի պրոռեկտորները, քարտուղարն է՝ Համալսարանի գիտական քարտուղարը:

7. Հանձնաժողովը հաստատում է իր աշխատակարգը:

8. Համալսարանի «լավագույն ուսանող» և «լավագույն կուրս» մրցանակի կոչման համար թեկնածուներից լավագույնի ընտրության համար Հանձնաժողովի նիստերը գումարվում են մինչև հոկտեմբերի 20-ը, մրցանակաբաշխությունը անցկացվում է ուսանողության միջազգային օրը՝ նոյեմբերի 17-ին[1]:

9. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում են անդամների կեսից ավելին:

---

[1] 2017թ. Հանձնաժողովի նիստը գումարվում է դեկտեմբերի 28-ին, մրցանակաբաշխությունը՝ դեկտեմբերի 29-ին:

10. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են նիստի մասնակիցների ձայների 2/3-ով և մինչև մրցանակաբաշխության անցկացման օրը հրապարակման ենթակա չեն:

III. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ «ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍԱՆՈՂ» ՄՐՑԱՆԱԿԻ ԿՈՉՄԱՆ ՀԱՄԱՐ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

11. Մրցանակաբաշխության անցկացման օրվանից առնվազն 45 օր առաջ Հանձնաժողովի քարտուղարի կողմից ֆակուլտետների դեկաններին է ուղարկվում թեկնածուների ներկայացման վերաբերյալ հայտը և լրացման ենթակա հարցաթերթը (կից ներկայացվում է հավելված 1-ում)[2]:

12. Թեկնածուների ներկայացման վերաբերյալ հայտը ստանալուց ոչ ուշ, քան 15 օրվա ընթացքում ֆակուլտետի գիտական խորհուրդը առաջադրում է Համալսարանի «լավագույն ուսանող» մրցանակի հավակնող 3 թեկնածուի, ովքեր առնվազն 2 կիսամյակ անընդմեջ ցուցաբերել են գերազանց առաջադիմություն, չունեն կարգապահական տույժեր և դրսևորել են հասարակական ակտիվություն[3]:

13. Ֆակուլտետի դեկանը 3 թեկնածուների փաստաթղթերը ներկայացնում է Հանձնաժողովի քարտուղարին: Փաստաթղթերում յուրաքանչյուր թեկնածուի մասով պետք է ներառվեն.

ա. քաղվածք ֆակուլտետի գիտական խորհրդի նիստի արձանագրությունից տվյալ թեկնածուի ներկայացման վերաբերյալ,

բ. թեկնածուի վերաբերյալ բնութագիր տրված՝ֆակուլտետի դեկանի, արհմիությունի և ուսանողական խորհրդի կողմից,

գ. քաղվածք ուսանողի ակադեմիական.տեղեկանքից,

դ. լրացված հարցաթերթիկը:

ե. Համալսարանում կատարվող կրթական բարեփոխումների վերաբերյալ ռեֆերատ՝ 2-3 էջի սահմաններում: ով պետք է գրի՝ դեկանը թե ուսանողը

IV. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ «ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍԱՆՈՂ» ՄՐՑԱՆԱԿԻՆ ՀԱՎԱԿՆՈՂՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

14. Համալսարանի «լավագույն ուսանող» մրցանակի կոչման համար թեկնածուներից լավագույնին Հանձնաժողովն ընտրում է՝ գնահատելով՝

ա. ուսման առաջադիմությունը,

բ. հետազոտական աշխատանքներ կատարելու ունակությունը,

գ. հասարակական ակտիվությունը,

---

[2] 2017թ. հայտը ուղարկվում է 10 օր առաջ:

[3] 2017թ. ֆակուլտետի գիտական խորհուրդը առաջադրում է դեկտեմբերի 23-26-ին:

դ. օրինակելի վարքը:

15. Հավասար ցուցանիշների դեպքում լրացուցիչ չափանիշներ են թեկնածուի կողմից լրացված հարցաթերթում մյուս հարցերի շուրջ նրա արտահայտած դիրքորոշումն ու մոտեցումները:

16. Համալսարանի «լավագույն ուսանող» մրցանակի կոչման համար թեկնածուների ուսման առաջադիմությունը գնահատվում է 8-10 միավորներով:

- 8 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր վերջին երկու կիսամյակում անընդմեջ ցուցաբերել են բացարձակ գերազանց առաջադիմություն.
- 9 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր վերջին երեք կիսամյակում անընդմեջ ցուցաբերել են բացարձակ գերազանց առաջադիմություն.
- 10 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր ողջ ուսումնառության ընթացքում ցուցաբերել են բացարձակ գերազանց առաջադիմություն:

17. Մագիստրոսական կրթական ծրագրի ուսանող-թեկնածուների դեպքում հաշվի են առնվում բակալավրիատում ցուցաբերած առաջադիմության արդյունքները:

18. Համալսարանի «լավագույն ուսանող» մրցանակի կոչման համար թեկնածուների հետազոտական աշխատանքներ կատարելու ունակությունը գնահատվում է 5-7 միավորներով:

- 5 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր մասնակցել են ներքուսանական գիտաժողովների, սեմինարների, ֆորումների (զեկուցումներ, հաղորդումներ, ելույթներ) և արժանացել պատվոգրերի և դիպլոմների.
- 6 միավորի կարող են հավակնել այն ուսանողները ովքեր մասնակցել են ներքուսական և հանրապետական գիտաժողովների, սեմինարների, ֆորումների (զեկուցումներ, հաղորդումներ, ելույթներ) կամ ունեն հրատարակված աշխատանքներ հանրապետական գիտական ամսագրերում.
- 7 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները ովքեր մասնակցել են միջազգային գիտաժողովների, սեմինարների, ֆորումների (զեկուցումներ, հաղորդումներ, ելույթներ) կամ ունեն հրատարակված աշխատանքներ միջազգային գիտական ամսագրերում:

19. Համալսարանի «լավագույն ուսանող» մրցանակի կոչման համար թեկնածուների հասարակական ակտիվությունը գնահատվում է 3-5 միավորներով:

- 3 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր ունեն ներֆակուլտետային հասարակական ակտիվություն.
- 4 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր անդամակցում են ներֆակուլտետային ուսանողական կառույցներին և ակտիվորեն ներգրավված են դրանց աշխատանքներում.

- 5 միավորի կարող են հավակնել այն թեկնածուները, ովքեր անդամակցում են Համալսարանային ուսանողական կառույցներին և ակտիվորեն ներգրավված են դրանց աշխատանքներում:

V. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ «ԼԱՎԱԳՈՒՅՆ ԿՈՒՐՍԻ» ԱՌԱՋԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

20. Ընտրության անցկացման օրվանից առնվազն 45 օր առաջ Հանձնաժողովի քարտուղարի կողմից ֆակուլտետների դեկաններին է ուղարկվում Համալսարանի «լավագույն կուրս» մրցանակի կոչման համար թեկնածուների առաջադրման վերաբերյալ հայտը[4]:

21. Հայտը ստանալուց ոչ ուշ, քան 15 օրվա ընթացքում ֆակուլտետի դեկանը ֆակուլտետի արհմբյուրոյի նախագահի հետ համատեղ քննարկում և առաջադրում է Համալսարանի «լավագույն կուրսի» թեկնածուին[5]:

22. Ֆակուլտետի արհմբյուրոյի նախագահը թեկնածուների փաստաթղթերը (նիստի արձանագրություն) ներկայացնում է Հանձնաժողովի քարտուղարին: Փաստաթղթերում յուրաքանչյուր թեկնածուի մասով պետք է ներառվեն.

ա.քաղվածք ֆակուլտետի գիտական խորհրդի նիստի արձանագրությունից տվյալ կուրսի ներկայացման վերաբերյալ, ինչ ներկայացում?

բ. կուրսի հաճախումները և կարգապահությունը,

գ. կուրսի ընդհանուր առաջադիմությունը,

դ. Կուրսի հասարակական ակտիվությունը,

ե. ՈՒԳԸ աշխատանքներին կուրսի մասնակիցների թիվը,

զ. Կուրսի գերազանցիկ ուսանողների թիվը,

է. Կուրսի մասնակցությունը ներբուհական միջոցառումներին:

VI. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ, ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

23. Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումները հաստատվում են Համալսարանի ռեկտորի կողմից:

24. Հանձնաժողովի կայացրած որոշումները կարող են բողոքարկվել Համալսարանի ռեկտորին Համալսարանի «լավագույն ուսանող» և «լավագույն կուրս» մրցանակաբաշխության անցկացման օրվանից հետո՝ եռօրյա ժամկետում:

---

[4] 2017թ. հայտը ուղարկվում է 10 օր առաջ:

[5] 2017թ. ֆակուլտետի դեկանը առաջադրում է է դեկտեմբերի 23-26-ին:

25. Հանձնաժողովի չհիմնավորված որոշումներ կամ Համալսարանի «լավագույն ուսանող» և «լավագույն կուրս» մրցանակաբաշխության կազմակերպման և անցկացման գործընթացում սույն կարգի խախտումներ ի հայտ գալու դեպքում Համալսարանի ռեկտորը պատճառաբանված որոշմամբ անվավեր է ճանաչում Համալսարանի «լավագույն ուսանող» և «լավագույն կուրս» մրցանակակրի ընտրությունը և 10-օրյա ժամկետում նշանակում է նոր ընտրություն:

VII. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

26. Համալսարանի «լավագույն ուսանող» և «լավագույն կուրս» մրցանակաբաշխության պարգևատրման արարողությունը, որպես կանոն, կատարվում է նոյեմբերի 17-ին: Անցկացման վայրը որոշում է Հանձնաժողովը:

27. Սույն կարգի ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Գիտխորհրդի կողմից 30.04.2010թ. ընդունված և 25.05.2012թ. փոփոխված «Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության «լավագույն ուսանող» և «Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության «լավագույն կուրս» ընտրելու համար մրցանակաբաշխության կանոնակարգը:

Հավելված 1

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ «ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍԱՆՈՂ» ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ

1._____

անուն, ազգանուն, հայրանուն

2._____

ֆակուլտետ

3. Բակալավրիատ / մագիստրատուրա _____կուրս

4. _____ 5. _____

ծննդյան տարի, ամիս, ամսաթիվ հեռախոս

5._____

էլ-փոստ

6._____

Հասցե

7. Ունեք արդյո՞ք մասնակցություն ներբուհական ուսանողական կյանքում (ուսանողական խորհուրդ, ուսանողական գիտական ընկերություն և այլն) և, եթե այո, ապա ինչպիսին.

9. Այլ (երիտասարդական ուսանողական) կազմակերպություններում ինչպիսի մասնակցություն ունեք, և որն է Ձեր մոտիվացիան նման գործունեությամբ (ներբուհական կամ արտաբուհական) զբաղվելու համար.

10. Ինչ նախաձեռնություններ Դուք ունեք և կարող եք առաջարկել ներբուհական կյանքն ավելի հետաքրքիր դարձնելու համար.

11. Ունե՞ք կատարված հետազոտական աշխատանքներ, եթե այո, ներկայացրեք դրանց ցանկը.

12. Որո՞նք են Ձեր կարծիքով ուսանողությանը հուզող հիմնական խնդիրները.

13. Ինչպիսի՞ միջազգային ծրագրերի եք մասնակցել (գիտաժողովներ, խորհրդաժողովներ, սեմինարներ, ֆորումներ և այլն).

14. Ձեր կարծիքով, որո՞նք են XXI դարի ուսանողին բնութագրող հատկանիշները.

15. Ունե՞ն այդ հատկանիշները Համալսարանի ուսանողները և Ձեր կարծիքով ի՞նչ է տալիս Համալսարանը.

16. Եթե հնարավորություն լինի որոշ ժամանակ ուսանել եվրոպական կամ ամերիկյան համալսարաններից որևէ մեկում, կցանկանաք արդյո՞ք ուսանել այնտեղ և ինչու՞.

17. Ինչպիսի՞ այլ հետաքրքրություններ ունեք.

18. 10 միավորանոց սանդղակում ինչպե՞ս կգնահատեք Ձեր ստացած կրթության որակը

_____ _____

ամիս, ամսաթիվ ստորագրություն